# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
# ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Երևան 0010; Նալբանդյան 28
Հեռախոս/ֆաքս (+37410) 58 05 23

21.07.2014.

ՏԾԻԳ- 458

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՏԾԻԳ-14/17»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2014 թվականի հուլիսի 31-ը, 16:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Տիգրան Ջանոյանը:

Հայտերը կբացվեն կայքի միջոցով 2014 թվականի հուլիսի 31-ին, 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների

մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցը պետք է ներառված լինի տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած անձանց ցուցակում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**2) «Ֆինանսական չափորոշիչ».**

բ. գնային առաջարկ՝ Հավելված N 2, կցելով՝ Հավելված N 2.1-ը: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Բավարար է գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտը, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերով (ծանուցմամբ) նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով

նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով (գնման էլեկտրոնային եղանակ) սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ tjanoyan@transportpiu.am:

Հարգանքով՝

S. Ջանոյան